կանայր նիւթք չինուածոցն և տախտակաց։ Զբազումս երևելի տեսլեամբ զահագին մեծութեան նաւուցն կը-լանէր ծով ի խորս և աներևութացուցանէր, զայլս յերկուս հերձեալ և յինքն ամփոփէր, և զայլս մասն մասն արարեալ ի ծով ճապաղէր. և մեռանէին անդ ի ջուրս ամենայն արամբ գլխաւորօք և յետնելովք և փայտան ծառայիւք, համայն կահիւք եւ սպասիւք նաւուցն և գանձուցն։ Եւ այլք տատանեալք ի վե-րայ ծովու բազում աւուրքք՝ դոյզն[1]) ինչ փայտիւ հա-զիւ ելանեն ի ցամաք եւ սակաւ լողնորդք փրկին։ Ապա և յետ աւուրց պատուհասին գտանեն նաւք Գ զինքեանս, մինն՝ զափուտանին, երկրորդն՝ քէհեային և երրորդն՝ որդոյ նորին, որք ոչն ունէին ընդ զօրացն կամս յոճրագործութիւնս։ Նաև վասն ահեղ սքանչե-լեաց Աստուծոյ եթող պատմողս զի երկիւղիւ ունիցին զինքեանս յամենայն կեանս իւրեանց։

Եւ յաւուրս լինէր անձրև բազում զտիւ և զգի-շեր, և յետ այնմ եղև սաստիկ հողմ, զի չինուածք քակեցան և որմք մնացեալ ի վայր հոսեցան և ծառք բազումք ի հիմանց տապալեցան, որ և յապարանս ար-քայի ՃԻ ծառ նոճի յարմատոց խլեցան։

Լինէր և գալուստ Եղիազարին Նոյեմբերի ԻԲ (Ել.) պահոց Ցիսնակի։

Ի սուղ ինչ զոր ասացաք սակս Ղազար հայրա-պետին, երթեալ չրջէր ի գիւղս և ի գաւառս մերձա-ւորս և հասանէր յէտրէնէ հաճեցեալ զկամս տէֆտէր-տարի՝ միջնորդութեամբ եղբօրն Իսմայէլի, որ երբեմն առ մեզ մաքառէր, անդրէն յղէ զայս ինչ առ քէհեա վէզիրին, Զի կամիմ, ասէ, շահս արքունեաց, և ահա

1) դուզն.